Հրանտ Նազարյան

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 4 հոդվածին համապատասխան պետության առջեւ առաջադրված է գերխնդիր՝ ապահովել մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը, Սահմանադրության եւ օրենքների հիման վրա, միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան: ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում արտացոլված են մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին բոլոր հիմնական միջազգային-իրավական նորմերը:

Մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության երաշխավորվածությունն ապահովող կարեւորագույն գործոններից են՝ այդ իրավունքների եւ ազատությունների իրացման մեխանիզմներն օրենսդրորեն նախատեսելն ու դրանց արդյունավետ գործադրման երաշխավորումը:

Կարեւորվում է պետության կառավարմանը անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտմամբ ընտրված ներկայացուցիչների միջոցով քաղաքացիների մասնակցության իրավունքը, որն անմիջականորեն բխում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, Քաղաքացիական իրավունքների մասին միջազգային պակտից:

Դեռեւս օրենսդրական կարգավորման չեն ենթարկվել կամ ոչ բավարար են կարգավորվել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ամրագրող սահմանադրական որոշ նորմեր (Սահմ. 18, 19, 20, 21, 28, 29, 31, 32, 35, 36, 38, 39, 40, 41 հոդվածներ): Հրամայական է դարձել գործող օրենսդրությունը Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունն ապահովող կարեւորագույն գործոններից են ինստիտուցիոնալ համակարգի (պետական եւ հասարակական) բնականոն եւ ներդաշնակ գործունեության ապահովումը:

Մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ողջ համակարգը շատ ավելի արդյունավետ կգործեր, եթե ինստիտուցիոնալ պետական եւ հասարակական համակարգերը սահմանադրորեն գտնվեին հավասարարժեք դիրքերում:

Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ պետական համակարգի կարեւորագույն ինստիտուտներն են. ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, դատական մարմինները:

ՀՀ Սահմանադրության 49 հոդվածում ամրագրված, ինչպես նաեւ ՀՀ Նախագահի մի շարք այլ լիազորությունների գործադրման մեխանիզմներ գործող օրենսդրությամբ նախատեսված չեն:

Մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ինստիտուցիոնալ պետական համակարգի հաջորդ կարեւորագույն ինստիտուտը Ազգային ժողովն է, որի օրինաստեղծ աշխատանքի արդյունավետությունից է կախված նաեւ մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների իրացման արդյունավետու-

թյունը:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կառավարության առջեւ դրված հիմնախնդիրները կարելի է դասակարգել հետեւյալ հաջորդականությամբ.

1. կառավարման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների իրականացում
2. օրենսդրական բազայի ընդլայնում:

Դատական իշխանության ոլորտում չլուծված հիմնահարցերը առավել քան շատ են: Սահմանադրության 35 հոդվածի կարգով դատավորների նշանակման հարցում հավասարակշռված չեն ՀՀ Նախագահի, օրենսդիր եւ գործադիր մարմինների դերը: ՀՀ Նախագահի՝ որպես դատական մարմինների անկախության երաշխավորի վերաբերյալ Սահմանադրության 94 հոդվածի դրույթը խիստ միակողմանի է ամրագրել դատական իշխանության անկախության սկզբունքը: Վիճահարույց է նաեւ դատավորների նշանակման ցուցակային մեխանիզմը:

Իրավական, ժողովրդավարական պետության կառուցման միասնական մոդել գոյություն չունի: Հայաստանի պարագայում լավագույն լուծումն այն է, որ Սահմանադրության շրջանակներում ապահովվի պետական եւ հասարակական ինստիտուցիոնալ համակարգերի ներդաշնակ մեխանիզմներ:

Այցելություն մատենադարան: